



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9908

✓
655g-

q - 89 m.

~~98~~ 2186

9

N10 b.

0'40

16

7x7 = 49

560

• 20.02

450 86 - 400

40 48

6559.47
9-895.

36

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՐԱՋԻՆ ՀՆԱՐՈՂԸ

3. ԳՈՒՍՏԵՎԵՐԳ

1008
36176

Θ U P Q U U V B



10.

ԽՈՎԿՈՒՆ

ՃՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԻԴԱՐԵԱՆԻ

1890

38196-ան



3. ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ.

Ա.



պազրութեան առաջին հնարող Յովհանն Գուտտենբերգ ծնաւ 1400 թըւմն, Գերմանիայի ազատ և հարուստ Մայնց քաղաքում. Նա հին ազնուական ցեղեց էր:

Մայնց, Սարասբուրգ, Վօրմս և Ռենսուի միւս քաղաքները, որոնք գանվում էին գերմանական կայսեր բարձրադրյն իշխանութեան տակ, կառավարվում էին ինքն իրենց, ինչպէս փոքրիկ հասարակագետութիւններ. Նոցա բնակիչներն էին քաջազնուականները, վաճառական դասր և աշխատասեր հասարակ ժողովուրդը: Ազնուականները և քաղաքացիք ստէպ վիճում էին միմեանց հետ իշխանութեան համար, իսկ ժողովուրդը պաշտպանում էր այդ դասակարգի կամ մէկ կողմը, կամ միւս, և նոքա փոփոխարար կամ քաջալերում, կամ հալա-

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 17 Марта 1890 г.

22504-ան

ծում էին ժողովրդին. այդ կոփւները, որոնք ծագում էին որ և է մեկի անձնական հաշիւներից և փառասիրովթիւնից, ստէպ յարուցանում էին ընտանեկան պատերազմներ. և յաղթողները լինում էին կամ ազնուականները կամ քաղաքացիք կամ ժողովուրդը. և այդ պատճառով այդ քաղաքի բնակիչները բաժանվում էին յաղթողների և յաղթուղների. յաղթուղներից շատերը սովորաբար ենթարկվում էին աքսորի:

Բ.

Երիտասարդ Գուտտէնբերգը լինելով իսկական ազնուական, իւր հայրենիքի Մայնց քաղաքի ներքին խոռվութիւնների ժամանակ, պատերազմում էր այն խմբի համար, որին պատկանում էին ինքը, իւր հայրը և պապը. այս անգամ յաղթուղները եղան ազնուականները. և Գուտտէնբերգ իւր բոլոր տղամարդ ազգականների հետ աքսորուեցաւ Մայնցից. մնացին մայրը և քոյրերը մենակ կառավարելու տունը և կայքը. սոյա մեղաւոր համարեցին, որ ազնուական կանայք են. Գուտտէնբերգի այս առաջին աքսորը երկարատե չէր. թշնամացող խմբերը հաշտուեցան և աքսորեալները վերադարձան. բայց շուտով, 1420 թուին, մի դատարկ վէճ ծագեցաւ այն մասին, թէ ով պէտք է զնայ ամենից առաջ,

Ռոբերտ կայսեր հանդիսաւոր կերպով Մայնց մըտնելու ժամանակ և այդ վէճից ծագեց մի ընդարձակ կոիւ. և Գուտտէնբերգ տասն և ինը տարեկան հասակում երկրորդ անգամ աքսորուեցաւ հայրենիքից: Այս անգամ ֆրանկֆուրտ ազատ քաղաքը, առաջարկեց իւր միջնորդութիւնը և հաշտեցրեց կրոսուող խմբերին. աքսորեալ ազնուականներին վերադարձրին հայրենիք այն պայմանով որ այնուհետեւ հաւասար իրաւունքներ ունենան ամեն մի գործում; ինչ որ վերաբերում է քաղաքի կառավարութեան: Բայց արգեհօք նորա համար, որ իւր քաջութեամբ միւնիքից աւելի վտանգաւոր էր առեւտրական զասին, և ինքն էլ ամենից քիչ էր համակրում նորան, թէ հպատաւթիւնը, որը նա ծծել էր մօր կաթի հետ, արդելում էր հպատակել ոչազնուականների լծին, կամ դուցէ այն պատճառով, և այդ ամենից հաւասական է, որ տասը տարուայ կենցաղավարութիւնը Ստրասբուրգում, ուր պարապում էր զիտութիւններով, նորա միաքը գարձել էր աւելի բարձր նպատակների քան թէ հասարակապեսութեան դատարկ պատիւները, Գուտտէնբերգ մերժեց վերադարձանալ հայրենիք. նորա մայրը, որ անդադար հոգս էր քաշում որդու մասին, խնդրեց հասարակապետութիւնից, գոնէ իրբե կենսաթոշակ, թոյլ տալ ստանալու իւր կարւածքներից մի փոքր մասը, որ հասարակապետութիւնը գրաւել էր. հասարակապե-

տութիւնը պատասխանեց, որ Գուտտէնբերգ աղ-
նուականը, հրաժարուելով հայրենիք վերադառնա-
լուց, յայտնի թշնամի եղաւ նորան. իսկ թշնամի-
ներին նա չէ տալիս կենսաթոշակ: Գուտտէնբերգ յա-
մառելով իւր հպարտութեան մէջ, դատապարտեց
իրեն կամաւոր աքսորի և նա ստիպուած էր ապրել
միայն մօր ծածուկ ուղարկած փողերով:

Բայց նա Ստրասբուրգում իւր բնութեան և իւր
գիտնական պարապմունքների համար գրաւեց այն-
պիսի միահամուռ սէր և յարգանք, որ երբ Մայնցի
դատարանի նախադահը մէկ անդամ պէտք է անցնէր
այդ քաղաքով, Գուտտէնբերգին համակրողները բըռ-
նեցին նորան և տարան բերդ. ու բաց չթողին այն-
տեղից, մինչեւ չառացան Մայնց քաղաքի գրաւոր հա-
մաձայնութիւնը՝ վերադարձնել Գուտտէնբերգին իւր
նախնիքների ժառանգութիւնը:

Գ.

Նորից տէր դառնալով իւր եկամուտներին, Գուտ-
տէնբերգ միջոց ունեցաւ իրեն նուիրելու գրագիտա-
կան, կրօնական և գեղարտւեստական ձգտումներին.
Նա սկսեց թափառել քաղաքից քաղաք, ուսումնա-
սիրելով նոյա իւրաքանչեւրի նշանաւոր յիշատակ-
ները, այցելով ամեն դասակարգի մարդիկների,
որոնք մի որ և է բանով յայտնի էին զիտութեան,

գեղարտւեստի, կամ մինչեւ անգամ արհեստների մէջ.
այն ժամանակ Գելմանիայում, արհեստաւորները
համարեած հաւասար էին գեղարտւեստագէտներին.
այդ այն նշանաւոր ժամանակն էր, երբ արհեստը,
գեռ հաղիւ յայտնի եղած, համարվում էր գեղա-
րտւեստ, և երբ մինչեւ անգամ ամենահասարակ ար-
հեստաւորները ստեղծում էին իրենց առաջին ձե-
ռագործը, որը նորութեան պատճառով ամենքին
երեւում էր իրու հրաշալիք: Գուտտէնբերգը ճանա-
պարհորդում էր մենակ, ոտով պայուսեակը ուսին,
որի մէջ պահուած էին նորա աւելորդ շորերը և
զիքերը, իսկ այնպէս, ինչպէս մէկ հասարակ ուսա-
նող որը թափառում է ուսումնարանից ուսումնա-
րան, կամ ինչպէս մէկ արհեստաւոր, որը որոնում
է վարձողի: Այդպէս նա անցաւ Ռենոսի ափերը,
Խտալիա, Զվիցերիա, Գելմանիա և վերջապէս Հոլան-
դիա. այդ Ճանապարհորդութիւնը աննպատակ չէր.
նորա առաջնորդը հաճշքը չէր, այլ մի որոշ նպա-
տակ, որը նորա հետ էր ամեն տեղ և ամեն ժա-
մանակ. նա կամենում էր միայն մի բան և նախա-
զգացմունքը նորան ասում էր, որ վաղ թէ ուշ, նա
համնելու է իւր նպատակին. նորա նուիրական գա-
ղափարն էր Աստուծոյ իսօքը տարածել Աստու-
ծաշունչ զիքով աւելի շատ մարդիկների մէջ:

Եւ այդպէս կրօնը Աստուծոյ սէրը, մղում էր ե-
րիտասարդ աշխատաւորին որոնելու նոր Ճանապարհ-

ներ, որպէս զի օրհնեալ սերմը ցրուէ աշխարհիս երեսին, և նա գտաւ այդ հաղարաւոր մարդիկների համար: Տպագրութիւնը պէտք է պարծենայ նորանով որ իւր սկզբնաւորութեան պատճառը կրօնական եռանդն է, այլ ոչ շահասիրական ձգտումները միայն ջերմ հաւատն է արժանի գործիք ձմարաւթիւնը դանելու համար:

Յայտնի չէ, թէ ինչ միջոցներով նա մտածում էր իրագրծել իւր գաղափարը, միայն մի դէպք ստիպեց նորան մոռանալ ամեն բան, ինչ որ առաջ մտածել էր և իսկոյն մօտեցուց նորան իւր ցանկալի դիւտին: Մէկ անգամ հոլանդիայի հարլեմ քաղաքում եկեղեցու լուսարարը, Լավրէնտիոս Կոստէր անունով, որը գիտութիւներ սիրելու համար դարձել էր Գուտտէնբերգի ընկերը, ցոյց տուեց նորան լատիներէն քերականութիւնը աշակերտների համար, որը փորուած էր փայտէ տախտակի վերայ: Տպագրական այդ առաջին փորձի պատճառը դարձեալ հասարակ պատահմունքն էր:

Դ.

Հարլեմի եկեղեցու երիտասարդ և աղքատ լուսարարը սիրահարուած էր. գալնանը, տօներին, նա քաղաքից դուրս ման գալու գնալիս, նստում էր ուռենիների տակ, տուի մօտ և քաղցր երեակայու-

թիւններ էր անում: Նորա սիրար լիքն էր սիրով դէպի իւր հարսնացուն, որի երեսը մի բոպէ չէր հեռանում նորա աչքից. ինչպէս ամեն մի սիրահար նա փորում էր դանակով թանգագին անուան առաջին տառը, հիւսուած իւր անուան սկզբնատառի հետ. այդ տառերի հիւսուածքը նորա համար երկու սրտերի միացման նշանն էր, բայց փոխանակ փորելու այդ տառերի ծառերի արմատների վերայ և թողնելու, որ նոցա հետ մեծանան, նա կրտում էր ուռենիների փոքրիկ ձիւզեր, հանում էր նոցա վերայից կեղել և գալնանային հիւթից խոնաւացած մակերեռյթի վերայ փորում էր իւր սիրած տառերը. յետոյ իբրև յիշատակ իւր երեակայութեան և իբրև նշան իւր սիրոյ, ընծայում էր այդ ձիւդքերը իւր հարսնացուին:

Մէկ անգամ, երբ նորան սցդպիսի աշխատանքը շատ լաւ յաջողել էր, նա փաթաթեց մէկ կտոր մագաղաթի մէջ ուռենու փոքրիկ ձիւզքը թանգագին տառերով, և տարաւ հարլեմ: միւս օրը ուզենալով զմայլել իւր աշխատանքի վերայ, նա բացեց մագաղաթը և ինչ զարմանք. մագաղաթի վերայ երեւում էին ձիշտ նոյնպիսի տառեր հակառակ կողմով և շէկ գոյնով. բանն այն է, որ ուռուցիկ տառերը, որ փորուած էին խոնաւ ուռենու վերայ, փիշերուայ ընթացքում գուրս էին տուել հիւթը և արտատպել էին մագաղաթի վերայ իրենց գծագրու-

Թիւնը: Կոստերի համար այդ մէկ զիւտ էր. Նա վերցրեց տախտակ, փորեց նորա վերայ շատ նոր տառեր և փոխանակ հիւթի, թրջեց նորան սե հեղուկով և այդպէս ունեցաւ առաջին տպագրական տախտակը. բայց այդ տախտակով կարելի էր տպագրել միայն մի երես. նորա տառերը շարժական չէին. և նոյանով կարելի չէր այն անթիւ բաղադրութիւններն անել որոնք կարեւոր էին դրած խօսքի բազմատեսակ պիտոյքների համար: Խեղջ լուսարար կոստերի գտած հնարքը կարող էր ծածկել գետնի բոլոր երեսը տախտակներով վերան փորուած բարձր և ցածր տառեր, բայց այնուամենայնիւ այդ տախտակները չպէտք է կարողանային շարժական տառերով մէկ արկղի տեղ բռնել: Բայց և այնպէս տպագրական արուեստի սկիզբը դրուել է հարլէմի խորանում, և կասկածելի է, թէ այդ զիւտի փառքը Գուտտեէնբերգինը թէ կոստերինն է, եթէ մէկ հանգստամանք չպարզէ, որ կոստերի զիւտը միայն սիրոց պտուղ էր և հասարակ պատահմունք, այն ինչ Գուտտեէնբերգինը՝ տոկուն հետազոտութիւնների և հանձարեղ խելքի ալտիւնք էր:

Ե.

Երբ Գուտտեէնբերգ այդ կոպիտ փորուած տախտակը տեսաւ, նորա միտքը, կարծես, կայծակի լոյս

առաւ. Նա նայում էր տախտակին, մոքով նորան բաժանում էր մասերի, Տալում էր, բաց էր անում, նորոգում էր, լրացնում էր, շուռ էր տալիս, քսում էր թանաքներով և ամրացնում էր բեեռներով. լուսարար ներկայ էր և զարմացած էր նորա երկար լուսվթեան վերայ. Նա չէր հասկանում, որ Գուտտեէնբերգը ծնանում էր այդ վայրկենին մի մեծ գաղափար, արդէն տարի իւր գլխումը կրելուց յետոյ: Գուտտեէնբերգ, հեռանալով կոստերի մօտից, տարաւ իւր հետ ամբողջ մի նոր արուեստ:

Զ.

Միւս օրը, ինչպէս մէկ մարդ, որ գտնում է զանձ և չէ կարող հանգստանալ ոչ ցերեկ, ոչ գիշեր, մինչև նորա տեղաւորելը մէկ ապահով տեղ Գուտտեէնբերգն էլ թողնում է հարլէմը, շաապ քայլերով գնում է գետի վեր Ռենսոսի ափերով, գալիս է Սարասրուց, փակվում է իւր գործանոցում, իւր ձեռքով շինում է ամեն հարկաւոր գործիքները, փորձում է մէկը, միւսը, կոտրում է, թողնում է սկսածը, նորից ձեռք է առնում, դարձեալ ձգում է, յետոյ նորից սկսում է իւր փորձերը և վերջապէս հանում է այն կէտին, որ մագաղաթի վերայ յաջողութեամբ տպվում են այբբէնարանի բոլոր քսան և չորս տառերը. Այդ առաջին տպած այբբէնարանն էր, թէկ

կոպիտ, բայց շատ նշանաւոր. այդ այն սկզբնական քսան և չորս տառերն են, որոնք իրենցով՝ ծածկեցին բոլոր երկրիս երեսը և որոնց մէջ մարմնացաւ միաբը. Գուտտէնբերգ շատ փողձերից յետոյ վճռեց կտրատել փայտից փոքրիկ խորանարդներ, ամեն մէկի վերայ փորեց մէկ տառ և յետոյ խրաքանչիւրը ծակելով, համրիչն նման շարեց թելի վերայ. այս անգամ փողձը միանդամայն յաջող էր:

Ե.

Նա այնպէս յափշտակուած էր յաջողութեամբ, որ զիշերը հազեւ կարողացաւ քնիլ. յուզուած և կցկտուր քնի ժամանակ նորա աչքին երեցաւ մէկ տեսիլք, որը յետոյ ինքը պատմում էր իւր բարեկամներին. այդ տեսիլքի մէջ այնքան մարդարէութիւն կար և այնպէս մօտ էր ճշմարտութեան, որ կարդալով նորան, մարդս համոզվում է, թէ գա իմաստութիւն է, այլ ո՛չ թէ տենդային ցնորք:

Ահա աւանդութիւնը այդ տեսիլքի մասին, ինչպէս որ զբուած և պահուած է Բէկիի ժողովածուի մէջ:

«Սուրբ Աբրոգանտի վանքում խուցի մէջ մէկ մարդ էր նստած սեղանի մօտ զլուխը ձեռքին, զունաս, երկար մօրուքով և անշարժ հայեացքով՝ այդ մարդու անունն էր Յովհանն Գուտտէնբերգ. Ժամա-

նակ առ ժամանակ նա բարձրացնում էր զլուխը և նորա աչքերը կարծես փայլում էին ներքին կրակով. այդ բուպէներին Յովհաննը ուրախացած շփում էր իւր մօրուքը. այդ նշանակում էր թէ նորա աչքերին երեւում էր այն խնդրի լուծումը, որի համար նա այնքան աշխատում էր. յանկարծ Գուտտէնբերգ վեր է կինում, աղաղակում է, կարծես, թեթևանալով իրեն երկար ժամանակ տանջող մտքից. Յովհանը վագում է պահարանի մօտ, հանում է այնտեղից մէկ սուր գործիք և տենդային արագութեամբ սկըսում է կտրել փայտի փոքր կտոր. նորա բոլոր շարժումների մէջ երեւում էին ուրախութիւն և յուզմունք, կարծես վախենում էր՝ թէ չլինի իւր գաղափարը, այդ գտած աղամանդը, գնայ իւր ձեռքից, որը նա ուզում է յղիլ գեղեցկացնել ապագայ սերնդի համար. նորա ճակատը ծածկուել էր քրանքի կաթիներով, իսկ աչքերը հետեւում էին գործի ընթացքին. Եյդ կերպով նա երկար աշխատեց և ժամանակը անցաւ նորա համար աննկատելի: Վերջապէս նա թաթախում է փայտի կտորը մէկ սեհեղուկի մէջ, դնում է նորան մազաղաթի վերայ և այն ձեռքը, որով բոնել էր փայտը, բոլոր մարմնի ուժով սեղմում է. նա այդ ձեռքիցը կազմում է մէկ բան, որ նման է մամուլի. ուռուցիկ փորուած տառը գուլս է զալիս մազաղաթի վերայ՝ նա տեսնում է իւր ձեռագործը և ուրախութեան ու ոգե-

ւորութեան մի նոր աղաղակ թռչում է շրթունքից.
Նա փակում է աչքերը այնպիսի բարեպաշտութեամբ,
որ նորան կարող էին նախանձել դրախտի բնակիչ-
ները և թուլացած ընկնում է նստարանի վերայ.
Եթե քունը յաղթում է նորան, նա կիսաձայն կրկ-
նում է. «Ես անմահ եմ»:

«Այն ժամանակ երեեցաւ մէկ տեսիլք, որը նորա
հոգին վրդովեց:

«Ես լսեցի, ասում էր նա, երկու անձանօթ զա-
նազան ձայներ, որոնք հերթով իմ հոգուս խորքե-
րում խօսում էին ինձ հետ. մէկը նոցանից ասաց
ինձ. «Ուրախացի՞ր, Յովհան, դու անմահ ես. այսու-
հետեւ քեզանով ամեն տեսակ լոյս պէտք է սփռուի
աշխարհիս երեսին. քո զիւտի շնորհիւ այն աղքերը,
որոնք քեզանից հաղարաւոր մղոն հեռու են ապ-
րում և ծանօթ չեն մեր երկրի գաղափարներին, կը
կարգան և կրհասկանան բոլոր այն մտքերը, որոնք
հիմայ դեռ լուռ են, բայց կրտարածուեն ու կ'աճեն
ինչպէս արեկ ճառագայները ցողի կաթիլների մէջ»:

«Ուրախացի՞ր, Յովհանն, դու անմահ ես. դու այն
թարգմանն ես, որին սպասում էին աղքերը, որպէս
զի կարողանան խօսել միմեանց հետ. դու անմահ ես,
որովհետեւ քո զիւտը շատ մտքերի կրտայ յաւիտենա-
կանութիւն, որոնք առանց քեզ մեռած կըծնէին.
շնորհակալութեան զգացումունքով նոյն այդ մտքերը
անմահ կ'անուանեն նորան, որը իրենց անմահացուց»:

Այդ ձայնը լսեց, թողնելով ինձ հիացման մէջ,
բայց լսուեց միւս ձայնը, որը ալսաց ինձ.

«Այս, անմահ ես դու, Յովհան, բայց ինչ գնով.
արդեօք միշտ քեզ նմանների միաբը բաւական մա-
քուր և բաւական սուրբ է լինելու, որ արժանի լի-
նի նորան հաղորդել մարդկային ցեղին. չէ որ շատ
մաքեր արժանի են ոչնչանալու քան թէ կրկնուելու
և տարածուելու աշխարհիս երեսին:

«Մարդս աւելի ապականուած է քան թէ իմաս-
տուն և երջանիկ. նա կրպզէ այն պարգևը, որ
դու նորան տալիս ես. նա 'իչարը գործ կրգնէ այդ
նոր ընդունակութիւնը, որ դու նորա համար ստեղ-
ծում ես. շատ գարեր քո յիշատակը կ'անիծեն, քան
կ'օրհնեն»:

«Կըծնուին մարդիկ գիտուն և զւաւիչ խելքով,
բայց հպատ և փչացած սրտով. առանց քեզ այդ
մարդիկը կրմային ստուելի մէջ, փակուած լինելով
նեղ շրջանում, նոքա միայն կ'անբախտացնեն ժա-
մանակը և իրենց մերձաւորներին. իսկ քո պատճա-
ռով նոքա կրկուրանան և կ'անբախտացնեն ու կրտա-
նեն զէպի յանցանք բոլոր ժամանակ մարդիկներին»:

«Նայիր այդ միլլիոնաւոր մարդիկների վերայ, ո-
րոնք մօտենալով վատերի հետ, կործանուել են.
Նայիր այդ երիտասարդութեան վերայ, որ փչացած
են գրքերից, որոնց թերթերը թոյնով են թաթա-
խուած և թունաւորում են մարդուս միաբը»:

«Նայիր այդ մատաղահաս օրիորդիների վերայ, որոնք կողցրել են ամօթը, հաւատը, անխիղջ են գէպի աղքատները և այդ այն գրքերի շնորհիւ, որոնք թունաւորում են մարդուս սիրտը:

«Նայիր այն մայրերի վերայ, որոնք լաց են լինում իրենց տղայոց համար:

«Նայիր այն հայրերի վերայ, որոնք կարմում են իրենց աղջեկների համար:

«Յովհանն, անմահութիւնը, որի համար պէտք է վճարել այդքան արտասուբներ և այդքան թշուառութիւններ, շատ թանգ գնուած չի լինիւ. միթէ քեզ համար պարձանք է ձեռք բերել փառքը այդ գնով, Յովհանն, քեզ չի սարսափեցնում այդ պատասխանատութիւնը, որը յանձդ ես առնում այդ փառքի համար:

«Լսէ ինձ, Յովհանն, ապրիր այնպէս, իբրև թէ ոչ մէկ զիւտ չես արել. նայիր քո զիւտի վերայ ինչպէս մէկ զրաւիչ բայց վտանգաւոր ցնորքի վերայ, որի իրագործումը այն ժամանակ միայն օգտակար և սուրբ կը լիներ, երբ մարդու բարի լիներ. . . մարդը չար է. իսկ չարերի ձեռքը զէնք տալ միթէ չի նշանակում մասնակցել այդ չարագործութիւնների մէջ»:

«Այդ ժամանակ վախի և կասկածների մէջ ևս զարթեցի և մէկ լոոպէ տասանվում էի. բայց յետոյ մոածեցի, որ Աստուծոյ պարգևները, ինչքան էլ

նոքա երբեմն վտանգաւոր լինեն, բայց երբէք վատ չեն լինում, և որ աւելորդ զէնք տալ մարդուս բանականութեանը ու ապատութեանը, նշանակում է մի նոր և շատ ընդարձակ ձանապարհ բանալ անմահ հոգու և յաւիտենական ձշմարտութեան առաջ:

«Եւ ևս վճռեցի շարունակել աշխատանքը իմ գիւտիս վերայ»:

22504-500 (36/56)

Գուտտեէնբերգ գնահատելով իւթիւնին բարյական և նիւթական նշանակութիւնը շնչուվ զգաց, որ այդպիսի գործի համար բաւական չեն միայն իւր տիսր բարուկները, կարձատե կեանքը և չափաւոր հարասութիւնը. նորան հարկաւոր էին երկու հակառակ բաներ. անհրաժեշտ էր գանել ընկերներ, որոնք կարողանային օգնել իւր ծախսերին ու աշխատանքին, և անհրաժեշտ էր առ ժամանակ ծածկել ընկերներից իւր իսկական նպատակը, որ պէս զի նոքա չտարածեին զիւտի մասին և ընկներ ուրիշ ձեռք իւր փառքը: Նա զիմեց սկզբից Սարասրուզի և Մայնցի մէկ քանի ծանօթ և հալուստ ազնուականներին, բայց, երեխ, ամենքը մերժում էին նորան, որովհետեւ այդ ժամանակներն ամեն մէկ արհեստ ազնուականների աչքում ստոր էր համարդում ազնուականն այն ժամանակ միայն կար ո էր Գուտտեէնբերգ.

արհեստաւոր լինել երբ հրաժարուեր բոլոր յարաբելութիւններից իւր ընկերութեան հետ։ Գուտաէնքերդ վճռեց անել մէկ վստահ քայլ եղաւ արհեստաւոր և մտաւ արհեստաւորների շրջանի մէջ։ նա խառնուեց ժողովրդի հետ, որպէս զի կարողանայ ժամանակին նորան կանգնեցնել բարձր մտաւոր և բարոյական կէտի վերայ։

Ուզենալով մի և նոյն ժամանակ պարապել մնոր հրաշալի գեղարուեստներով», ինչպէս են՝ ժամանակութիւնը, յզկագործութիւնը և ակնավաճառութիւնը, նա պայման կապեց Սարասրուրդի երկու հարուստ արհեստաւորների հետ, որոնց անունն էր Սնդրէաս Դրիտցեզէն և Յովհան Ռուֆֆէ, իսկ յետոյ նոյնպէս Ֆառուստի հետ, որը Մայնցում սեղանաւոր էր և ոսկերիչ սորա անունը պատճառ եղաւ, որ ժողովրդի երեսակայութիւնը շփոթում էր նորան Դերմանիայի յայտնի կախարդ Ֆառուստի հետ, որ զիտէր բնութեան բոլոր գաղանիքները և յարաբերութիւն ուներ ողիների հետ։ այդպիսով տպագրութեան ծագումը ժողովուրդը բացարեց կախարդութեամբ։ վերջապէս Գուտաէնքերդ ընկերացաւ և չայլմանի հետ, որի եղբայրն Սարասրուրդում առաջինն էր հիմնել թղթի գործարան։

թ.

Ուպէս զի աւելի երկար ժամանակ ծածկէ ընկերներից իւր ձեռնարկութեան իսկական նպատակը, Գուտաէնքերդ պարապում էր նոցա հետ զանազան երկորսդական արհեստաներով։ ծածուկ շարունակելով իւր խուզարկութիւնները տպագրական մեքենայի կատարելագործութեան համար, նա մի և նոյն ժամանակ բացարձակ պարապում էր և ուրիշ արհեստներով։ նա սովորեցուց Դրիտցեզէնին թանգաղին քարեր թրաշելու արուեստը, իսկ ինքը Վենետիկի ապակիներ էր յզկում հայելիների համար, որոնց գնում էր պղնձէ շրջանակների մէջ և զարգարում էր փայտից կարած նախշերով։ դոքա պատկերացնում էին զանազան անձերի հին և նոր կտակարանից և դիցարանութիւնից, այդ ընկերութիւնը մեծ փող էր վաստակում հայելիներից, ոլոնք վաճառվում էին Ալսէնի տօնավաճառում։ այդպէս Գուտաէնքերդ միջոց էր գանում ծածկելու գաղանի ծախսերը, որ նա զործադրում էր իւր զիւտը դլուխ հանելու և կատարելագործելու համար։

Գուտաէնքերդ աւելի լաւ ծածկելու համար իւր պարապունքը ժողովրդի հետաքրքրութիւնից, որը սկսել էր արդէն կատածել նորան կախարդութեան մէջ, գնաց քաղաքից դուրս, և Ա. Աքրոգաստի վանքի աւելակների մէջ շինեց իւր արհեստանոցները։

այդտեղի հարևաններն էին միայն աղքատ ժողովուրդը. այնպէս որ այդ առանձնութիւնը շատ յարմար էր նորա առաջին փորձերի համար:

Վանքի ընդարձակ բակերի խորքերը պարապմունքի համար նա տուեց իւր ընկերներին, որոնք այնքան կարօս չէին ծածկուելու, իսկ ինքը ընտրեց մէկ առանձին խուց և բնակուեց այնտեղ մենակ. նորա գուռը միշտ կողպած էր և երբէք ոչ ոք ներա չէր մանում նորա բնակարանի շէմքից. կարծում էին, թէ նա այնտեղ պարապում է մակարդակներ զծելով, և նկարերվ հայելիների շըջանակների և ոսկեղիների համար զանազան նախշեր. բայց նա անցնում էր օրեր և անքուն գիշերներ, տանջուելով իւր գիւտը իրագործելու վերայ. նա կտրատեց փայտից շարժական տառեր, հնար գտաւ ձուլել այդ տառերը մետաղից. նա զլուխ էր կոտրում, թէ ինչ միջոցով կարող է այդ տառերը գնել փայտէ և երկաթէ կաղպարների մէջ, որպէս զի կազմուեն նոցանից նախադասութեան բառեր, տողեր, երեսներ, թղթի վերայ պատշաճուոր կերպով տեղաւորելու համար. նա գտաւ գոյնզգոյն թանաքներ, ձիթոտ և ըլր, վրձիններ և բարձեր, թանաքը տառերի վերայ քսելու համար, տախատակներ և շըջանակներ, տառերը միասին բռնուելու համար. գտաւ և պտուտակներ ու ձնշեներ նոցա թղթի վերայ սեղմելու համար. Ամիսներն և տարիներն անցնում էին յա-

չող կամ անյաջող փորձերի վերայ, որոնք Գուտատէնքերպի կալողութեանը և ընկերութեան դրամագլւխն վնասում էին:

Վերջապէս շինեց փոքր զիրքով մամուլ, որը իւր կարծիքով, մէկ մէքենայի բոլոր յարմարութիւնները ուներ իւր նպասակինն համապատասխան. նա առաւ այդ օրինակը վերարկուի քղանցքի տակ, գնաց քաղաք, Կոնրադ Զաշըախի մօտ, որը լաւ սրբում էր փայտէ և մետաղէ իրեր, ու պատուիրեց նորան շինել այդ տեսակ մէքենայ մ.ձ զիրքով. նա խնդրեց վարպետն այդ գործը ծածուկ պահել և տասց միայն, թէ այդ այն տեսակ գործիք է, որի օգնութեամբ զարմանալի գեղարուեսական և մէքենական իրեր դուրս կըդան և որից ժամանակին անսովոր հրաշքներ պիտի տեսնեն:

Սրոզը առնելով ձեռքը այդ օրինակը շուռ տուեց նորան ամեն կողմ և փորձուած վարպետի արհամարհական ժպիտով, որը տեսնում է տուաջին աշակերտական աշխատանքը, ասաց նորան փորք ինչ ծաղըերդ.

«Պարոն Յովհանն, չէ՞ որ ձեզ պէտք է մէկ հասարակ մամուլ:—Այո՛, պատասխաննեց Գուտատէնքերպ լուրջ և յափշտակուած ձայնով.—յիրաւի այդ մամուլ է, բայց այնպիսի, որից շուտով անսպառ ալիքներով պէտք է բղիսէ մէկ այնպիսի հրաշալի ըմզելի, որը երբէք մարդս խմած չէ. այդ մամուլի

օգնութեամբ Աստուած պէտք է տարածէ իւր «խօսքը», նորանից սուրբ Ճշմարտութեան աղբիւր պէտք է վազէ. նա կը լինի նոր Ճրադ, որը կը ցրուէ տղետութեան խաւարը և կը լուսաւորէ մարդիկներին մէկ անձանօթ լուսով։ Գուտտէնբերդ գնաց. սրողը ոչինչ Հասկանալով նորա խօսքերից, շնեց մեքենան և տարաւ Սբրոդաստի վանքը։

Սյդ առաջին տպագրական մամուլն էր։
Սրողը տալով Գուտտէնբերդին այդ մեքենան, հասկացաւ, որ այդտեղ մէկ գաղտնիք կայ թագնուած։ «Ես տհմնում եմ, պարոն Յովչան, ասաց նա Գուտտէնբերդին, որ դուք յիրաւի յարաբերութիւն ունիք ոգիների հետ. սորանից յետոյ, ևս կը հազարնդուիմ ձեղ ինչպէս մէկ ոգու։

Ժ.

Երբ Գուտտէնբերդ ունեցաւ իւր ուզած մամուլը, սկսեց զբքել տպել. այդ մամուլի տակից առաջին գուրս եկած զբքերի մասին քիչ տեղեկութիւններ են մնացել. բայց զիտենալով նորա շատ բարեպաշտ բնաւորութիւնը, պէտք չէ կասկածել, որ առաջին տպագրական գործը եղան Սուրբ Գրքերը. Աստուծոյ ներշնչմամբ և նորա խօսքի համար հնարած արուեստը իւր սկիզբը դրեց Աստուծոց, ինչպէս վկայում են Մայնցի յետապայց հրատարակութիւնները, «սաղմոս-

ներն» և լատիներէն «Աստուածաշունչը» Մայնցում առաջին անգամ տպած զբքելն են, որոնք Գուտտէնբերդի մամուլի տակից են գուրս եկել. Աստուծոյ անուան փառաբանութիւնը և աղօթքը նորա անունով առաջին երկու ձայներն են, որ հնացեցն տպագրական մամուլի միջոցով բարեպաշտ և անբախտ հնարողի ձեռքի տակից. տպագրական մամուլի գործունէութեան սկիզբը պէտք է յաւիտեան մնայ նորա համար իբրև մէկ փառաւոր յիշատակ։

Սյդ առաջին հրատարակութեանց մանրամանութիւնները չկան մինչեւ անգամ Սարաբուրգում և Մայնցում, որովհետեւ Գուտտէնբերդ համեստութիւնից թէ հպարտութիւնից իւր տպագրական հրատարակութիւնների ոչ մէկի վերայ չէ դրել իւր անունը. ոմանք ասում են, որ նա չէ ստորագրուել քրիստոնէական համեստութիւնից, չուզենալով այդ փառքը մարդկային անուաննը յատկացնել որովհետեւ նա իւր զիւտի պատճառը համարում էր Աստուծոն։ Իսկ ոմանք կարծում են, թէ նա չէ տպել իւր անունը զբքերի վերայ, որովհետեւ այն ժամանակ արպելը, ինչպէս ամեն արհեստ, համարվում էր մէկ առետրական գործ ազնուականներին անվայել. այդ արհեստը կարող էր սառացնել նորա ցեղի և դասակարգի անունը և նորան զբկել պատուից իւր հայրենիքում։

Թայտնի է միայն Գուտտէնբերդի մի պարզեա-

զբից, որ տուել է իւր քրոջը Գէրէլին, որը կօյս էր Մայնցի Ս. Կլարա վանքում, նա Ստրասբուրգում տպուած գրքեր է ուղարկել քրոջը և խոստացել, ինչ որ նոր տպուի, այն էլ ուղարկելու:

Այդ յաջողութիւնից յետոյ Գուտտէնբերգ պէտք է կրէր շատ վշտեր: Մենք տեսանք, որ փողի կարիքը ստիպեց նորան որոնել ընկերներ, և օգնականների անհրաժեշտութիւնն անհամար գործերի պատճառվ ստիպեց նորան պարզել իւր ընկերներին և ուրիշ շատ արհեստաւորների իւր գործի ընթացքը և մինչև անդամ իւր զիւտի մէկ քանի գաղտնիքները: Ընկերները ձանձրանալով փող տալու այնպիսի գործի համար, որ իրենց ոչ մի օգուտ չէ բերում, հրաժարուեցին օգնել: Գուտտէնբերգ աղաջում էր նոցա չմողնել ՀՔնց այն բոպէին, երբ մօտ էին արգէն փառքն ու հարատութիւնը: Նոքա համաձայնեցին նորից փող տալու այն պայմանով, որ նա իրենց ընկեր համարի իւր բոլոր գաղտնիքներին, բոլոր օդուտներին, սեփականութեան բոլոր իւրաւունքին և փառքին:

Իւր գործի յաջողութեան համար նա ծախեց նոցա իւր փառքը: Գուտտէնբերգի անունն անհետացաւ. ընկերութիւնը կուլ տուեց իրեն հիմնադրին. հնարող շուտով եղաւ իրեւ մէկ հասարակ մշակ կոլումբոսը, որ սեփական արհեստանոցում: Այդպէս էր և Քրիստափոր Կոլումբոսը, որ շղթայակապ վերադարձաւ

Հայրենիք իւր սեփական նաւով մինչդեռ նա նոր էր գտել նոր աշխարհը իւր նաւաստիների հետ:

ԺԱ.

Այդ գեռ քիչ էր. ընկերներից մէկի ժառանգները դատ բացին Գուտտէնբերգի գէմ, որպէս զի խլեն նորանից թէ զիւտի և թէ սեփականութեան իրաւունքը, և խանգարեն գործ գնելու իւր օգտին տպագրական արուեստը. նոքա կանչեցին նորան Ստրասբուրգի գատարանը, որ ստիպեն իսկապէս հրաժարուելու իւր իրաւունքներից: Դատարանի առաջնորա նեղութիւնը չափազանց էր. իրեն արդարացնելու համար, նա ստիպուած էր իւր արուեստի մանրամասնութիւնները բացատրել, որ նա բոլորովին չէր ուղում հրաժարակել որովհետեւ ապագայում յոյս չէր մնալ իւր ձեռքն առնել այդ գործը: Դատաւորները հետաքրքրութիւնից զրոյուած, խորամանկ հարցմունքներ էին տալիս, որոնց պատասխանելով, կրբացուեին տպագրութեան բոլոր գաղտնիքները: Նա այդ պատասխաններից խօյս էր տալիս, աւելի լաւ համարելով տարուել գործը, քան թէ բացատրել ամենքին իւր արուեստի գաղտնիքը: Դատաւորները իրենց նպատակին հասնելու համար կանչեցին Գուտտէնբերգի հաւատարիմ բանուորներին և հրամայեցին յայտնել իրենց ամեն բան, ինչ որ գիտեն.

այդ պարզ և բարեխիղճ մարդիկ, որոնք Գուտտէն-բերգին հաւատարիմ էին, հրաժարուեցան ցուցում նոր տալու. նորա աւելի լաւ համարեցին Գուտտէն-բերգին հաւատարիմ մնալ քան թէ նորա ագահ ընկերները. տաղաղական դիսաւոր գաղտնիքը չիմացան, Գուտտէնբերգ վասառած, զուցէ և աքսորուած, հեռացաւ մենակ իւր հայրենի Մայնց քաղաքը, որ կարողանայ նորից գործ սկսել և վերականգնել իւր խորտակուած կեանքն ու փառքը:

Նա դեռ երիտասարդ էր. Սարասբուրգի գատի աղմուկը նորա անունը բարձրացուց ամբողջ Գերմանիայում. բայց դէպի հայրենիք, որը թողել էր իբրև աղնուական, հիմայ վերադարձաւ ինչպէս մէկ հասարակ արշէստաւոր. անպատուութիւնը, աղքատութիւնը և փառքը մրցում էին միմեանց հետ նորա բաղդի մէջ. միայն սէրը ճանաչեց նորան, ինչպէս յիստափ նա էր և ինչպէս որ լինելու էր ժամանակին:

ԺԲ.

Աշակ թէ ինչ են ասում աեղական աւանդութիւնները այդ սիրոյ մասին, որն և հաստատվում է երկու խսկական յիշատակալաններով, որոնք պահուած են Սարասբուրգի դիւանում և նշանակուած է որ «աի-
ն» 1437 թուով. մէկը նոցանից ասում է՝ որ «աի-

կին Անետա դէ լա Պորտ-դէ-Ֆէր», Գուտտէնբերգի կինը, Սարասբուրգի եկեղեցուն նուելք է տուել որ յիշատակին իւր և ժառանգների անունները, իսկ միւսը նորա կնոջ մահուան վկայականն է:

Գուտտէնբերգը իւր երկրորդ աքսորման ժամանակ ծանօթացաւ Սարասբուրգի մէկ մատաղահաս օրիորդի հետ, որը նոյնպէս աղնուական էր և սիրեց Գուտտէնբերգին. նորա անունն էր Անետա դէ լա Պորտ-դէ-Ֆէր, անկասկած Ռենոսի ափերի մէկ որ և է ամրոցի անունով որը պատկանում էր նորա ցեղին. Գուտտէնբերգ սիրահարուեց նորա վերայ այն բոցավոր, լուրջ և հաստատուն սիրով, որ միայն կտրող էին սիրել այն ասպետական ժամանակների մարդիկ. նոքա գրաւոր միմեանց խօսք տուին պսակուելու. երբ Գուտտէնբերգ լինկաւ աղքատութեան և անբախտութեան մէջ, Անետան միայն նորա համար պահել էր իւր սիրար, երիտասարդութիւնը և գեղեցկութիւնը. Գուտտէնբերգ Մայնց վերադառնալս պէտք է իսկոյն իւր հարմացուին առաջարկութիւն անէր և կատարէր իւր առւած երդումը, բայց նա չարաւ, արդեօք նա վախենում էր, աղնիւ և ամենի յարգած Անետային ձգել անպատուութեան և աղքատութեան մէջ, որոնց ենթակայ էր եղել ինքը, թէ նա զգում էր, որ ինքը արդէն անարժան է միանալ այն դասակարգի օրիորդի հետ, որի իրաւունքներից նա հրաժարուել էր. ինչ և իցէ, Գուտ-

տէնքերգ չպահանջեց հարսնացուից նորա տուած խօսքերի կատարումը և ինքն էլ չկատարեց իրենը. նա սպասում էր վերականգնել իւր անունը և այն ժամանակ միայն առաջարկութիւն անել Անետային: Նորա քաղաքավարութիւնն և համեստութիւնը յադթեցին հարսնացուի քնքոյշ խնդիրներին. Անետան զիմեց Սարասրուրդի գատարանին, որ ստիպէ փեսացուին կատարելու երեմն տուած խոստմունքը՝ պատկուելու իրեն հետ:

Գատարանին զիմելը միակ վաւերական վկայութիւնն է Գուտտեէնբերգի և Անետայի պատկի մասին և այդ մինչեւ հիմայ կայ: Գուտտեէնբերգ վերջապէս զիջաւ սիրոյն և պատկուեց Անետայի հետ. նոքա երեխայք ունեցան, որոնք փոքր ժամանակ մեռան:

Մէծ մարզիկների ժառանգութիւնը նոցա զիւտերն են, իսկ ժառանգները ամբողջ մարդկային ցեղը:

Դորանից յետոյ 1439 թուին, երբ գատաստանով վճռուեց, որ Գուտտեէնբերգը Անգլիաս Դրիտցէնի ժառանգներին վարձատրութիւն տայ, բայց դորա փոխարէն միակ ինքը մնայ իւր գաղտնիքի տէրը, նա թողեց Ս. Աբրուգատի վանքն և գնաց Սարասրուրդ, ապրեց այն տան մէջ, որ կոչվում էր կինդանաբանական պարտէզ (Thiergarten) և հիմնեց իւր առաջին տպարանը:

Նկատելու արժանի է, որ նոյն իսկ այն տեղում՝ որտեղ նորա տունն էր, հիմայ համալսարան է շե-

նուած. կարծես առաջուց այդ տեղը նշանակուած էր լուսաւորութեան բարձր գործի համար, որին տպագրութիւնն սկիզբն գրեց և որը յետոյ այնտեղեց սկսեց տարածուել գատաստութեան միջոցով:

Երբ Գուտտեէնբերգ 1446 թուին հեռացաւ Սարաստուրգից, թողեց այնտեղ աւանդութիւններ իւր արուեստի մասին իրեն օգնականների և բանուորների միջոցով, որոնք զիւտէին նորա զիւտի և միջոցների գաղտնիքը: Շուտով մէկ նօտար, Մէնտել, կամ Մէտելին անունով, որը միայն 1448 թուին ստացել էր Սարասրուրդի քաղաքացու անուն, և Էկչառէնը, եկեղեցու երեցը, որոնք բոլորովին վարժուած էին այդ արհեստի մէջ, քանի որ այն ժամանակ զեռ շատ քիչ յայտնի էր, Կարտազեանի վանքի գանձարանի օգնութեամբ տպարան բացին և մէծ եռանդով սկսեցին տպել ու հրատարակել գերմաններէն Աստուածաշունչ: Մէնտելի տպարանից շատ ուրիշ զրքեր գուրս եկան մէկը միւսի ետելից. նա շուտով հարսացաւ, այն ինչ Գուտտեէնբերգ աղքատութիւնից հալածուած, ինչպէս մէկ փախտական, վերագրաճաւ Մայնց:

Սարասրուրդ և Մայնց անկախ քաղաքների իրար մէջ ունեցած մրցումը և հարսառութիւնը, որի շնորհւ Մէնտելի ազգեցութիւնը զօրացաւ, նպաստեցին վերջինիս փառափախութեանը և օգնեցին նորան փոխել Գուտտեէնբերգի անունը իւր անուան հետ: Այդ

այնպէս նորան յաջողուեց, որ մէկ քանի տարի Գուտտէնբերգը մոռացուած էր, կամ դիտմամբ անուշղիր էր թողուած. իսկ Մենտելը Սարասբուրգում համարվում էր «Աստուածային արուեստը» գտնող և նորա պատուին տօներ էին կատարվում:

ԺԴ.

Վերադառնալով Մայնց և իւր սիրելի կնոջ աղդեցութեամբ դուրս գալով անպատիւ վիճակից, Գուտտէնբերգ բոլորովին նուիրուեց իւր գործին: Ընկերանալով Թաուստի և նորա փեսայ Շեֆֆերի հետ, նա Մայնցում շինեց արհեստանոցներ և ընկերութեան անունով սկսեց հրատարակել զարմանալի մաքուր տպագրութեամբ Աստուածաշնչի և Սաղմոսի գրքեր:

Շեֆֆերը երկար ժամանակ պարապել էր արտադրելով և վաճառելով Փարիզում ձեռագիրներ. նորա ճանապարհորդութիւնները և յարաբերութիւնները Փարիզի գեղարուեստագէտների հետ պատճառեղան, որ նա ծանօթացաւ, թէ ինչպէս պէտք է մշակել մետաղները մեքենաբար: Վերադառնալով Մայնց, նա նոր միջոցներ դառւ ձուլելու ալճակից շարժական տառեր, պղնձէ մայրերի մէջ. այն ժամանակ գրերը շատ մաքուր էին տպվում: այդ նոր միջոցով տպուած էր և 1457 թուի Սաղմոսը. այդ

առաջին գիրքն էր, որի տարին նշանակուած է: Շուտով Գուտտէնբերգի հսկողութեան տակ դուրս եկաւ և Մայնցի Աստուածաշնչը, որը նոյնպէս Շեֆֆերի ձուլած գրերով էին տպուած և դա համարվում էր տպագրական արուեստի օրինակելի արդիւնք:

ԺԴ.

Այդ ժամանակ Գուտտէնբերգի նոր աշխատակիցները՝ սեղանաւոր և արհեստաւոր Շեֆֆերը, ինչպէս և Սարասբուրգի Մենտելը, կամ Մետելինը, նոյնպէս ուղեցան ծածուկ այդ անտւնը իրենց յատկացնել ինչպէս և ուրիշ շատերը, յայս ունենի խաբել գոնէ ապագայ սերնդին, եթէ անկարելի էր խարել ժամանակակից մարդիկներին: Շեֆֆերը մէկ թղթի մէջ, որ տպուած է Տիտոս Կիլիոսի գերմաներէն թարգմանութեան հետեւ, որի մէջ այդ թարգմանութիւնը նուիրվում է Մաքսիմիլիանոս կայսերը, խոսափանվում է «որ տպագրական արուեստը գտել է Մայնց քաղաքի երեկելի մեքենագործ Յովչան Գուտտէնբերգը»: Բայց եօթը տարուց յետոյ, ինչպէս երեսում է, Շեֆֆերն էլ Թաուստին էլ մոռացել էին այդ խոսափանութիւնը և իրենց յատկացուցին գիւտի բոլոր փառքն ու պատիւը:

Շուտով գորանից յետոյ Մաքսիմիլիանոս կայսրը

տպարանապեաններին հաւասար համարեց հեղինակ-ների հետ և յարգանքի արժանի. այդպէսով նա ոչնչացուց նոցա դէմ եղած նախապաշարմունքները: Նոցա արուեստը, նոյնպէս և իրենք, սկսեցին հա-մարուել ազնիւ: Կայսրը թոյլ տուեց նոցա հագնե-լու արծաթով և ոսկով բանուած հագուստներ. այդ իրաւունքն ունեին միայն ազնուականները. նա տուեց նոցա արծուանիշ գրոշմ, որի թեւերը փուռած էին երկրագնդի վերայ—նշան տպած խօսքի ամե-նուրեկ տարածուելուն:

ԺԵ.

Բայց այդ ժամանակ Գուտտէնբերգ արդէն չկար աշխարհիս երեսին. նորան վիճակուած չէր մտնել աիրելու մտքի, կրօնի և քաղաքականութեան այս աւետեաց երկրին, որը նա տեսաւ միայն իւր աե-սիլքի բարձրութիւնից Ս. Աբրոգաստի վանքում: Աշխատակիցները խլեցին նորանից փառքը և սեփա-կանութիւնը, կարիքը աքսորեց նորան արդէն վերջին անգամ իւր հայրենիքից. մահը խլեց նորանից զա-ւակներին. և նորա միակ միմիթարութիւն մնաց կնոջ սէրը, որ հաւատարիմ էր նորա կեանքի ամեն մէկ փոփոխութիւնների ժամանակ, և որը գնում էր նորա հաեկից ամեն տեղ: Ծերացած, առանց մէկ կտոր հացի և կնոջ մահից յետոյ մնալով առանց ընտա-

նիքի, նորան ինամում էր նասսառի իշխան մե-ծահողի Ագոլֆը. իշխանը նշանակեց նորան պետա-կան խորհրդական և սմնեկապետ այն պատճառով, որ կարողանայ օգտուել այն հանճարեղ մարդու ընկերակցութիւնից և խօսակցութիւնից, որը յետոյ պէսք է խօսէր ամեն տեղերի և ամեն ժամանակ-ների հետ: Նասսառն և նորա թագաւորը, Գուտ-տէնբերգին ապաստարան տալով յաւիտեան անմա-հացուցին իրենց անունը: Մէկ քանի տարի շարու-նակ հանդիսաւ և խաղող կեանք վարելով, Գուտ-տէնբերգ շարունակեց իւր ձեռքով տպել գրքեր. նա այնտեղ էլ մեռաւ, վաթսուն և ինը տարեկան հա-սակում:

Նա գրել էր իւր կտակի մէջ. «Ես կտակում եմ իմ քրոջս բոլոր այն գրքերը, որոնք տպել եմ Ս. Աբրոգաստի վանքում»: Խեղճին իրենից յետոյ ոչինչ չէր մնացել կտակելու, բացի այն հարսառութիւնից, որ առհասարակ նորա պէս հնարագէտները թողնում են—այսինքն՝ նա թողեց յիշատակ աշխատանքների մէջ թառամած երիտասարդութիւնը, բոլոր կեանքի հալածանքները ու անարդարութիւնները, իւր չփնա-հասուած ծառայութիւնը, շատ ծանր օրեր ու ան-քուն գիշերներ, և իւր ժամանակակիցների անուշա-դրութիւնը:



Առաջին պատրաստությունը և մերժությունը բայց
նորա հետ չմեռաւ արուեստը. տպագրութիւնն իս-
կոյն նորա մահից յետոյ տարածուեցաւ հրացանի
պայթիւնի արագութեամբ: Երկու-երեք տարուց յե-
տոյ բոլը Եւրոպական մայրաքաղաքներում արգելն
տպարաններ կային. այդ էր լուսաւորութեան նոր
գարագուխը, որի զարգացումն այն ժամանակուանից
չգագարեց: Գաղղիան, Անգղիան, Հոլլանդիան, Գեր-
մանիան, Վինետիկը, Ֆենեվան, Հռոմը և Լէհաստանը
շտապում էին օգտուել այդ նոր գիւտից, որպէս զի
շտացնեն իրենց մէջ եկեղեցական և աշխարհական
գլուխութեամբ:

Արեւելքը ծանօթացաւ այդ նոր արուեստին կ.
Պոլսի հրէանների միջոցով, որոնք 1500 թուին ար-
պել էին մէկ քանի յօդուածներ լուրբունական
պրականութեան մասին. բայց իրենք մահմեղական-
ները տպագրած գլուխութեամբ սկսեցին գործ ածել միայն
ԺԷ գալում:

Վերջապէս և Ռուսաստանում 1500 թուին միտ-
րապօլիսի կարգագրութեամբ Մոսկուայում հիմ-
նուեցաւ տպարան Մադրեուրզից եկած վարպետ-
ների օգնութեամբ:



28

ՀՀՀ 15 = 230

Rx X = 15

X 0 = 200



$$Sh = S \times h$$

$$70\cancel{5} = 6 \times 80 \quad 64 = 8 \times 6$$

$$0.64 = 8 \times 0.08$$

$$285 = 7h + 9h$$

$$7h = x \times 9 \quad - 9 \times 5$$

$$0.45 = 9 \times 0$$

$$\begin{array}{r} 585 \\ \times 7 \\ \hline 415 \end{array}$$

$$\begin{array}{r} 168 \\ \times 3 \\ \hline 48 \end{array}$$

ՀՀ Ազգային գրադարան



NL0082861

